ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար է <<Թերթերում հայտարարությունների տպագրման>> ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/5 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մարտի 21-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/5-2 պայմանագրում 2018 թվականի ապրիլի 4-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1	ՀՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 03/26-1/6014-18 գրություն
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի «Ծառայության մատուցման ժամկետը» սյունակում «25.12.2018թ.» բառերը փոխարինվել են «15.12.2018թ.» բառերով
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետով նախատեսված պայմանը:

Պատվիրատու՝ *Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

21.03.2018 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/5-2 գնման պայմանագրի

ք. Երևան

04 ապրիլի 2018թ.

<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայոց Աշխարհ» օրաթերթն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս օրաթերթի գլխավոր խմբագիր Գ. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով Կողմերի միջև 21.03.2018 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/5-2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի «Ծառայության մատուցման ժամկետը» սյունակում «25.12.2018թ.» բառերը փոխարինել «15.12.2018թ.» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ
<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ	«Հայոց Աշխարհ» օրաթերթ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3	ք. Երևան, Թումանյան փողոց, 38 շենք, բնակարան 41
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 900011011724, ՀԿՀՀ 02565827	Հ/Հ 163008124592
	ՀԿՀՀ 02532477
Աշխատակազմի ղեկավար՝	Գլխավոր խմբագիր՝
Ա. Մկրտչյան	Գ. Մկրտչյան
(ստորագրություն)	(ստորագրություն)